

ամողորմութեամբ զբաւաւրէի ի բաժանումնս, ուղղ. « Եւ խոնարհեալք յամարգութիւն ամողորմութեամբ զհրեալք ի բաժանումնս »:

Զ. — էջ 29. « Ուր ոմամք զհետ ցուցմն և այն ծանցմն արշաւելով զհրեալսկանն և զաղեղմայիմն եւեթ բարբառեսցին », ուղղ. « Ուր ոմամք զհետ ցուցմն և այնծանցմն արշաւելով զհրեալսկանն և զաղեղմայիմն և եթ թարբառեսցին » (շ):

Ե. — էջ 44. « Եւ զմացեալ քրիստոնէութեան հաստաց որոյ ամուսն », ուղղ. « Եւ զմացեալ զհետ քրիստոնէութեան հաստաց որոյ ամուսն »:

Ը. — էջ 77. « Որում սակաւ իմէ ժամանակի ամցելոյ՝ ընդզիմացեալ ոմանց ի զօրավար իշխանացմն չայոց, մեթծեալ ընկեցիմ զմա յիշխանութեան և կաթողիկոսութեանն », ուղղ. « Որում սակաւ իմէ ժամանակի ամցելոյ՝ ընդզիմացեալ ոմանց ի զօրավար իշխանացմն չայոց մեթծեալ ընկեցիմ զմա յիշխանութեանն և կաթողիկոսութեանն », — Զօրավար բառի անպակասեալ գործածութիւնը (զօրավար իշխան) վրիպակի մը կասկածը կու տայ:

Թ. — էջ 163. « Եւ ջանալիք երեսելի ի մէջ առայց և ի մէջ ամենայն ազգաց », ուղղ. « Եւ ջանալիք երեսելի ի մէջ Պարսից և ի մէջ ամենայն ազգաց »:

Ժ. — էջ 197. « Եւ դարձեալ զի և կանքն իւր իսկ ի խմամս չարիմ միտէիմ համապագ », ուղղ. « Եւ դարձեալ զի կամքն իւր իսկ ի խմամս չարիմ միտէիմ համապագ »:

ԺԱ. — էջ 288. « Եւ ծաղեալ զմա առկայցն մերկացուցիմ զմա », ուղղ. « Եւ ծաղեալ զմա Պարսկայցն մերկացուցիմ զմա », (Չէ ամհրաժեշտ ուղղելի):

ԺԲ. — էջ 308. « Որպէս առաքեալն և խոստովանողն տէր Գրիգորիոս, արարողն ուղիղ զործոց և ուսուցիչն յստակ և անհեղ վարդապետութեան », ուղղ. « Որպէս առաքեալն և խոստովանողն տէր Գրիգորիոս, արարողն ուղիղ զործոց և ուսուցիչն յստակ և անհեղ վարդապետութեան »:

ԺԳ. — էջ 575. « Թէ չհամայնողութիւն Պերոզի ի յետահարութեան ըմադատեաց զիս մեռանի », ուղղ. « Թէ չհամայնողութիւն Պերոզի և հարստահարութեան ըմադատեաց զիս մեռանի »:

ԺԴ. — էջ 577. « Յորմէ ի դառն ծառայութեանէ՝ մինչ կենդանի է՝ Արեաց աշխարհն զերծանել ոչ կարէ », ուղղ. « Յորմէ ի դառն ծառայութեանէ՝ մինչ կենդանի էր՝ Արեաց աշխարհն զերծանել ոչ կարէ »:

Պօսքը Պերոզի վրայ է որ արդէմ մեռած էր և իր տեղը զաղարշ թագաւորաց:

ԺԵ. — էջ 575. « Զի քաջի առն քան զբազում ժամս հարստոց կեցեալ շատ լաւ է մի օր ծանուցանել զլաւութիւն ամօքն և մեռանի », ուղղ. « Զի քաջի առն՝ քան զբազում ժամս արհամարհանոց կեցալ շատ լաւ է մի օր ծանուցանել զլաւութիւն ամօքն և մեռանի »:

ԱՐԵԱՐ

## ԳԻՏԱԿԱՆ Ք

### ՄԱՐՏԻՆՈՅ

ԱՐՔԵՊԻՍԿՈՊՈՍԱԿԱՆ ՎԻՃԱԿԸ

Այս վիճակը կը գտնուի Միջագետաց մէջ, որ հիմա կ'անուանի էլ — Ճէզիրա, և սանճագ է Տիարպէթի վիլայէթին: Հին ատեն այս սանճագը կը կոչուէր Միգրոս, երբ Միջագետաց արեւելեան կողմէն և իր զլխաւոր թագաւորն էր Մարթն (= Նոստէս պիւս), որ այժմ աւան մի է փոքրիկ. Մարտին կը վայելէ արդ Գաւառին զլխաւորութիւնը, ուր կը նստի գաւառապետ Մուխասարըֆը: Բայց Մարտինոյ թեմը շատ աւելի կը տարածի յիշեալ գաւառէն դուրս՝ ինչպէս պիտի տեսնենք:

Բնակիչը Մարտին գաւառին մեծաւ մասամբ Քուրդ են. թաղաքին մէջ կան չորս տունք Քրդաց. Միսրիքի, Տալիէ, Միստէքիսիսի և Միսիսիսիսի աշխրեթները:

Իսկ շուրջը կան Էմեքիսիս և Տարագձի ցեղերը, հիւսիսային և արեւելեան կողմերը: Արաբ են Շամարները, որ կը բաժնուին ցեղերու. Ֆերպաղա, Սապէր, Լամարաբ, և այլն, և կը ծաւալին Մարտինէն մինչեւ Պաղատաւ:

Մարդ լեռան Քրդերը բազմաթիւ և հսկայատիպ են:

Տերիքի կողմերը կան՝ Մահմուտիէ, Ապստիէ, Մոստաֆիէ և Բոսթի Գիւրտ ցեղերը: Միլիկները Մարտինի հարաւ. աւրեւմտեան կողմն են, և կը տարածին մինչեւ Ուրֆա թաղաքը. Քիլիկ — Հայէսան, Քիլիկ — Չիլիկեան և Տագարի ցեղերը կը բնակին Մարտինի հարաւային արեւմտեան և հարաւային կողմերը: Նուսէպիկի ցով կան՝ Թալ (արապ), և Մարսնէ (Քիւրդ) աշխրեթները: Իսկ Միստիսի սահմաններն են՝ Տալքուրի և Հրոփարի թաղաւթիւ ցեղերը:

Մահմետական Քրդերէն և Արաբներէն վերջ՝ բազմաթիւ են Ասորիք՝ Յակոբիկը և կաթողիկեայք. առաջինները մեծաթիւ են. Մարտինի և մերձակայ գիւղօրէից մէջ կը հաշուին իբր 1500 տուն, որոնց քառորդը կաթողիկեայ են: Աւելի բազմաթիւ են Միտիաթ գաւառին մէջ, ի մաս նաւորի ձէպէլ էլ թոր, ուր երեք եպիսկոպոսարան ունին Ասորի Յակոբիկը. իսկ կաթողիկեայք շատ սակաւաթիւ են: Մարտինի արեւելեան կողմը կը գտնուի Տէր-Ջաֆարան վանքը՝ քաղքէն ժամ մը հեռու, ուր կը նստի Յակոբիկ — Ասորւոց Պատրիարքը ԺԵ. զարէ ի վերս կաթողիկեայ Ասորի Պատրիարքները յառաջագոյն կը բնակէին ի լեռան Լիբանան՝ Տարառնի քով Շարֆի վանքը. Ս. Ժողովը վճռեց 28. Մարտ 1852 որ Մարտինի աթոռը ճոխանայ Պատրիարքական պատուով. և 17. Սեպտ. 1888 ին տրուած վճռով Մարտինի և Ամիտայ թեմերը իւրաւու հետ միացան: Մարտին կը նստի նաեւ ընդհանուր փոխանորդ եպիսկոպոս մը: Սակայն Պատրիարքները տակաւին չեն հաստատած հոն իրենց կայուն բնակարանը:

Ասորւոց թիւը Մարտինի սանճաքի մէջ կը հասցնեն ումանց 60,000 ի, որոյ փոքրագոյն մասը կաթողիկեայ է:

Երրորդ բազմաթիւ ազգ Մարտինի քաւառին և թեմին մէջ հայք են. որոնց թիւը կը հասցնեն 30,000 ի, մեծ մասը լուստւորչականաց կը պատկանի, յաւէտ քաղաքին հիւսիսակողմերը. Մարտինի մէջ առ հասարակ կաթողիկեայ են, ինչպէս նաեւ անոնք որ կը գտնուին ի թէլ — Էր — մէն, կան եւս կաթողիկեայք վէրան — շէհր և Բաուէլ — այն. Տէրիկ ունի բաւական թիւ հայոց, որոնց փոքր մասը՝ կաթողիկեայ են: Մարտինի հիւսիսակողմերը կան բազմութիւն մի հայոց: Նոյն քաղաքին հիւսիսային արեւելեան կողմն է Սաուր գազան, ուր բազմաթիւ Քիւրդ գիւղերու մէջ կան նաեւ քանի մի գիւղեր, որոնց մէջ կը բնակին հարիրաւոր հայ տներ, և սակաւաթիւ կաթողիկեայ հայեր: Նաեւ Նուսէ-

պին (Մծրին) և Դարա ունին հայ բնակիչ երկու հասարակութեան:

Հայոց Մարտին բնակիլը շատ հին է. երկրացիք կը համարին որ իրենց եկեղեցին հազար տարի առաջ շինուած է, բայց անշուշտ հայերը շատ աւելի առաջ բնակեր են հոն: Այժմու բնակչաց մեծ մասը Սասունէ զաղթած են և կաթողիկէութիւն ընդունած:

Հին ժամանակներէ Մարտին եպիսկոպոսարան էր Ամդայ Մետրապօլտութեան ներքեւ, բայց ետքէն Արքեպիսկոպոսարան եղաւ Հայոց քով: Վաղ ժամանակներէ կային հայ եպիսկոպոսներ ի Մարտին. ԺԷ դարուն սկիզբը եպիսկոպոս էր Նոյն քաղաքին՝ Գալուստ, որ ձեռնադրուեցաւ Սրսոյ Յովհաննէս ԺԲ. կաթողիկոսն (1601 — 1620). իրմէ վերջ կը յիշուի Սարգիս Եպիսկոպոս Մարտինոյ, զոր ձեռնադրեց Մինաս կաթողիկոս Սրսոյ (1627 — 1632):

Այս ժամանակները Մարտին եկած են Կարմեղեան կրօնաւորք որոնք սկսած են քարոզել միութիւն ընդ եկեղեցւոյն Հոռվմայ: Ասոնց յաջորդեցին Քարուշին կրօնաւորք, որոնց վերակացութիւնն հաստատուած է ի Մարտին յամէն 1641, որ և կեդրոն է լատին առաքելութեանց ի Միւշագետս և ի Տիարպէքիր:

Սէնթումէնցի Յովհաննէս Մկրտիչ Քարուշին կրօնաւորք Հոռվմ Ուրբանեան ղրդրոցը ճամբեց թաւապսեան հայազգի պատանին, ուր լաւ կըթուրին մ'առաւ և ձեռնադրեցաւ քահանայ: Այնուհետեւ Միւշքոն վարդապետ թաւապսեան դարձաւ իր հայրենիքն, ուր մեծ փայլ մը ստացաւ իր սրբաւորութեան վարուքն և գիտութեամբ. հոչաւ կուած էր ամեն տեղ իբր վարդապետ աւտուածաբանութեան. և շատեր կ'երթային ուսանելու իրմէ Նոյն բարձր ուսմունքը. ասոնցմէ մին էր նաեւ Արքանաւ Արծիւ ռեան, Այնթապցի, որ ապա եղաւ Պատրիարք Տանն Կիլիկիոյ: Միւշքոն Մարտինի Հայ ժողովրդեան կաթողիկէութիւն ընդունել տուաւ. մանաւանդ երրորդ Եպիսկոպոս ձեռնադրուեցաւ՝ առաւ նաեւ հնացեալ եւ

կեղեցին, որ նուիրեալ էր յանուն Սրբոյն Գրիգորի Լուսաւորչի. նորոգեց զայն և կոչեց Ս. Գեորգ զօրավար. սակայն Մարտինի ժողովուրդը մոռցած չէ ցալսօր նախկին անունն եւս, և կը կոչէ զայն աղաւաղ լեզուաւ Սկրոտր Զատրիլ (Ս. Գրիգոր Լուսաւորիչ). ըստ այսմ անշուշտ պէտք է ուղղագրել յայն ասորդարի հայերէն ու տանաւորն, որ կ'ըսուի թէ օրինակուած է մագաղաթի վրայ յամին 1791, և է այս

Շինեցաւ տուն Տեանն յանուն  
Սուրբ Կիրակոս զօրաւարի:

ՅԱՄԻ ՏԵԱՆՆ 450.

որ աղաւաղեալ է, եթէ չէ սխալ գաղափարուած. զի Գրիստոսի 450 թուականին կամ հայոց Ն. Մ. (1001) չէր կրնար յիշուիլ Ս. Կիրակոս զօրավարին անունը. ըստ որում այդ անունը դրած է Գեորգիոսի մահէն կամ անոր ժամանակ: Այս թէ ոչ հարկ կ'ըլլայ ըսել՝ թէ այդ գրութիւնը չէ վաւերական կամ թէ վերջէն շինուած բան մի է:

Չէ յայտ թէ որչափ ատեն Մարտինոյ Աթոռը պարապ մնացած էր. և ո՞վ էր վերջին եպիսկոպոսը: Մեկըն վարդապետ Հոռմէն որոշուած էր եպիսկոպոս Մարտինոյ. միայն կը բաղձային որ ձեռնադրութիւնն ըլլայ հայ ծիսիւ. կայ կոտորակ մը թղթոյ՝ յորում իբր թէ ինքն Գեորգ. Թասպասեան կը ծանուցանէ Ս. Աթոռոյն, որ պիտի ձեռնադրուի Սոյ կաթողիկոսն, որ կաթողիկեայ էր և զահակաւոր էր 1709 ին. Նամակը կը յիշէ Գրիգոր Պիսակ Ատանացի կաթողիկոսը, որ այլ եւս չէր կաթողիկոս. այս ամենուն մէջ կայ շփոթութիւն անուան և ժամանակի: Սոյոգն այն է՝ որ ձեռնադրողն եղաւ կաթողիկոսն Սրբոյ Պետրոս Պիսակ Հալէպցի, որ նստաւ 1701-1712. և ինքն եւս կաթողիկեայ էր: Մտադրութեան արժանի է այն, որ Գեորգ. Թասպասեան ընտրեց դիմել առ Աթոռն Սրբոյ և ոչ այլոր. ինչպէս իրմէ առաջ յիշուած Մարտինի

եպիսկոպոսները եւս Գալուստ և Սարգիս Սրբոյ Աթոռէն ընդունած էին իրենց ձեռնադրութիւնն: Հալէպի մէջ կատարեցաւ Գեորգ. Թասպասեանի օծումը յամին 1708. նոյն ատեն յիսուն և չորս տարեկան էր, ըստ որում ծնունդն եղաւ յամի 1654:

Մեկըն Արքեպիսկոպոս դարձաւ իր հայրենիքը և Աթոռը. և առաւել եւս բարեկարգեց զայն. այնուհետեւ բոլոր հայքի Մարտին և ի Թէլէ-Էրմէն միացած էին Հոռմայ եկեղեցւոյն հետ առանց բացառութեան, և վարեց իր իշխանութիւնը ի մաստութեամբ և սրբութեամբ: Բայց հազիւ հինգ վեց տարի մնաց ի Մարտին. զի յամին 1714 Վ. Պոլսոյ էր: Կենաց մի մասն անցուց ի վիշտս և ի հաւածանս. վերջապէս մատնեցաւ ի բանտ և ի ծառայութիւն թիոյ Կ. Պոլսոյ նաւարանին մէջ, ուր կնքեց իր կեանքը շղթաներու մէջ յամին 1716-7:

Բ. — Մարտիրոս Մարգար Թախմանեան Ապրեցի:

Սա ծնաւ յԱմիդ 1652 ին և յամին 1684 ձեռնադրեցաւ եպիսկոպոս Տակերտի յԷջմիածին Եղիազար կաթողիկոսն: Մեկըն վարդապետ Թասպաս յամին 1685 ին հպատակեցաւ Հոռմայ և յիշեալ արքեպիսկոպոսի մահուանէն վերջ՝ յամին 1718 փոխադրեցաւ Մարտիրոս ի Մարտին: Հաստատութիւնն ընդունեցաւ Հոռմէն 2 օգոստոս 1722 հանգեաւ ի Տէր 1737 ին և Թաղեցաւ Ս. Գեորգ աթոռանիստ Եկեղեցին ի Մարտին:

Գ. — Մեկըն Մարգար Թախմանեան Ապրեցի:

Ծնաւ յամին 1675 եղբայր էր Մարտիրոս եպիսկոպոսի և աշակերտեցաւ Մեկըն վարդապետի Թասպասեան. հաստատեցաւ ի Ս. Աթոռոյն յամին 1738 կամ 1739: Մարտինի արձանագրութիւնը կ'ըսէ. «Ամբարձաւ յաթոռ եպիսկոպոսական հրամանաւ Առաքելական Աթոռոյն՝ նոյն տարին Տիարպէքը Քաղղիացուց Յովսէփ

պատրիարքէն և Կարելի է՝ որ ասանկ հրաման մը տրուած ըլլայ, չեմ հակառակիր. բայց երկրայութիւն չիկայ որ ձեռնադրութիւնն եղած է Հալէպ Ս. Աստուածածնի եկեղեցին Հայոց Աբրահամ արքեպիսկոպոսէն, որուն ընկերացան Յակոբ և Սահակ եպիսկոպոսունք, զի այն եկեղեցին նոյն ժամանակ իրենց ձեռքն էր. և այս ամենուն կը վկայէ նաեւ Մանուէլ վարդապետ, որ կը գրէ. «Ապա յետ աւուրցինչ երեքեան եպիսկոպոսունք այնորիկ (Աբրահամ, Յակոբ և Սահակ) ձեռնադրեցին զՏէր Մարգար Ամդեցի՝ որ եկն ի Բերիա, յետ առնելոյ նոցա զեկեղեցին, եպիսկոպոս քաղաքին Մամպուտայ, որ է Մարտին»։ Նա ինքն Աբրահամ կաթողիկոս իր պատարագի տումարին մէջ նոյնը կը հաւաստէ բացայայտ։ Մեղգոն Մարգար մասնակից եղաւ սինէղոդոսին որ զումարեցաւ ի Հալէպ նոյն տարին. և Աբրահամ ընտրեցաւ կաթողիկոս պատուիրք Տանն Կիլիկիոյ, և ապա գնաց իր վիճակը՝ Ունեցաւ սա ինչ ինչ իրաւարանական խնդիրներ Աբրահամ պատրիարքին հետ, զոր Ս. Աթոռը կարգադրեց։ Վարեց իր իշխանութիւնը քսան և եօթը տարի. ննջեաց ի Տէր իննսուն և երկու տարուան 31 հոկտ. 1767 և թաղեցաւ յաթոռանիստ եկեղեցին Սրբոյն Գէորգայ։

Դ. — Յովհաննէս Թապասեան Մարտիկի։

Յամին 1717 ծնաւ ի Մարտին. աշակերտ եղեւ Հոովմ Ուրբանեան զպրորդ։ Հաստատեցաւ յԱռաքելական Աթոռոյն Արքեպիսկոպոս Մարտինի յաջորդ Մեղգոնի Մարգարայ, 30 ապր. 1768 և նոյն տարին Հ. սեպտ. ձեռնադրեցաւ Արքեպիսկոպոս Մարտինոյ Միքայէլ Պետրոս Գ. Կիլիկիոյ պատրիարքէն ի Զմմառ։ Տարի մը մնաց հովիւ իր թեմին և ապա հրաժարելով գնաց Հոովմ. ուր հանգեաւ ի Տէր 3 ապր. 1774 և թաղեցաւ Ս. Մարիամ Եգիպտացւոյ եկեղեցւոյն մէջ։

Ե. — Յովսէփ Պալիբեան Հայկացի։

Յովհաննէս Արքեպիսկոպոսի մահուանէն առաջ ընտրուեցաւ իր տեղը Յովսէփ վարդապետ Պալիբեան, որ ծնած էր ի Հալէպ յամին 1725, աշակերտեցաւ Ուրբանեան զպրորդն ի Հոովմ. հաստատութիւնը տրուեցաւ ի Ս. Աթոռոյն 14 նոյեմբ. 1772 և ձեռնադրեցաւ ի Զմմառ Միքայէլ Պետրոս Գ. Կիլիկիոյ պատրիարքէն նոյն տարին։ Վիճակը դառնալէն ետեւ՝ հրամանաւ Ս. Ժողովոյն գնաց Պաղտատ, որ քննէ Նեստորականաց և անոնց Յովհաննէս կաթողիկոսայ պատրիարքին զործերն։ Եւ երբ իր պաշտօնը աւարտելով կը դառնար, զարնուեցաւ խորշակէ կամ թունաւոր հողմէ և վախճանեցաւ ի Նինուէ (Մուսուլ), կամ ի Քէրբուր 1 օգոստ. 1773 Սակայն Մանուէլ վարդապետ կու տայ իրեն չորս տարի։

Զ. — Պետրոս Եղիազարեան Հաճի Պօղոս Անկիարացի։

Ծնաւ յամին 1729. ուսմունքը կատարեց ի Հոովմ Ուրբանեան զպրորդ. էր Անտոնեան Ուխտէն։ 15 Մայիս 1775ին Հոովմէն հաստատեցաւ Արքեպիսկոպոս Մարտինոյ։ Զեռնադրութիւնը կատարեցաւ նոյն տարին 26 նոյեմբ. ի Զմմառ Կիլիկիոյ Միքայէլ Պետրոս Գ. պատրիարքէն. յամին 1782 գտնուեցաւ ներկայ յընտրութեան բարեյշատակ պատրիարքին Ասորւոց Իգնատիոս Միքայէլի։ Տանն և չորս տարի վարեց իր հովուական պաշտօնը, և հանգեաւ ի Տէր Մարտին 11 յուլիս 1787 և թաղեցաւ եպիսկոպոսաց գերեզմանին մէջ։

Է. — Յովսէփ Թապասեան Մարտիկի։

Նշանաւոր անձ մ'էր. ծնաւ ի Մարտին 1753 սեպտ. 8։ Սա եւս աշակերտ եղաւ Ուրբանեան զպրորդի ի Հոովմ. երեսուն և և հինգ տարեկան էր երբ ընտրեցաւ և հաստատեցաւ Առաքելական Աթոռէն 23

սեպտ. 1788 Արքեպիսկոպոս Մարտինոյ. ձեռնադրութիւնն ըրաւ Գրիգոր Պետրոս Ե. պատրիարք Տանն Կիլիկիոյ 16 օգոստ. 1789 կամ ըստ Մանուէլ վարդապետի ի տօնի վերացման խաչին 14 սեպտ. Սա խորխոտ ընթացք մը բռնեց և սկսաւ ինքնագլուխ վարուիլ. ասոր համար անշուշտ կ'ըսէ Կայստանոս Մորոնի, թէ «Մարտինոյ եպիսկոպոսն անկախ պատրիարքէն՝ կը նստի Մարտին, թէն Կիլիկիոյ պատրիարքութեան ներքեւ է իր աթոռն. և Ս. Ժողովն Տարածման հաստոյ պարտք դրած է պատրիարքին, որ հսկէ անոր վրայ»: Սա վարեց իր աթոռը քառասուն և ութ տարի. վախճանեցաւ 27 նոյեմբ. 1830 ին ի Մարտին. և թաղեցաւ նա խորը արքեպիսկոպոսաց շիրմին մէջ:

Ը. — Բարադամ կամ Արահամ Գանտիկեան Աշխէրտցի:

Ասոր ծնունդն եղած է յամին 1767 յԱշխէրտ. աշակերտեցաւ սա Ուրբա նեան դպրոցն ի Հոռվմ: Ձեռնադրեցաւ Յովակիմ Թասպասեան արքեպիսկոպոսէ՝ իրեն օգնական եպիսկոպոս Տոյգայի տիտղոսով, զոր թէ և ոմանք Տիվրիկը կարծեցին, բայց աւելի յարմար է ըսել թէ այն՝ Տերիկն էր: Մարտինոյ Արքեպիսկոպոսին այս ձեռնեցութեան չի հաւանեցաւ Գրիգոր Պետրոս Զ. պատրիարք Տանն Կիլիկիոյ. և շատ մը բանակցութիւններէ վերջ՝ Պիոս Է. իր քահանայապետութեան ԺԲ. տարին 5 դեկտ. 1817 ին կարգեց զԲարադամ արքեպիսկոպոս Եղեւսիոյ. և մնաց օգնական Յովակիմայ մինչեւ անոր մահը. ապա վաթսուն և ինն տարուան անտանեցաւ արքեպիսկոպոս Մարտինոյ, զոր կառավարեց իբր երկու տարի. 28 1838ին թաղեցին Մարտին իր նախորդաց գերեզմանը:

Թ. — Յովսէփ Պարրայեան Հայեպցի:

Ծնաւ Հալէպ յամին 1786. էր աշակերտ և միարան վանաց Զմամուի. նա

խորդին մահուանէն առաջ, Ս. Ժողովը որոշեց տալ անոր օգնական ի 23 յունիս 1838 Պարրայեան Յովսէփ վարդապետը բարեհաճութեամբ քահանայապետին, որ յանձնեց անոր ընտրութիւնը Գրիգոր Պետրոս Զ. պատրիարքին Կիլիկիոյ. և սա ընտրելէն ետեւ հաստատեց յամին 1838 նոյն տարին ձեռնադրեց յուլիս 15 ին, Յովսէփ արքեպիսկոպոս քանի մի տարի իր վիճակը յանձնաձեւէ վերջ հրաժարեցաւ և առանձնացաւ ի Հալէպ, ուր կնքեց իր կեանքը 7 սեպտ. 1854 և թաղեցաւ նոյն քաղաքին մէջ:

Այս պատճառաւ ժամանակ մը պատրիարքական Աթոռը խնամ կը տանէր Մարտինոյ հոգեւոր վարչութեան իր փոխանորդներով, այս ինքն Պարրայեան արքեպիսկոպոսին հրաժարելէն՝ մինչև տըրուեցաւ նոյն վիճակին նոր հովիւ:

Տ. Վ. ԱՆՏՈՍՏԱՐԵԱՆ

#### ԱՌ ՊԱՏՈՒԱՐԺԱՆ ԽՄԲԱԿՐՈՒԹԻՒՆ

«Բազմալեզ» հանդիսարանի

Բազմալեզի վերջին պարկին մէջ՝ Գաղիլէի Նորաշէմ Ազգ. վարժարանի բացման հանդիսին ծանուցման մէջ մի քանի սխալման սպրդած են, զորս արժամ է ճշդել:

Այդ վարժարանը Վսեմ. Պօղոս փաշա Նուպար շինել տուաւ, սակայն փոխուած է ամուսն, և կ'աւանդուի միշտ ըստ առաջնոյն «Գալուստեան Վարժարան» զայն հիմնողին անուամբ. և այդ բարեբարի վարժարանի համար կտակած հողերուն արդիւնքով կը հոգացուի ցարդ այդ Հաստատութեամբ ծախսմ:

Այդ վարժարանի շինութեամբ համար մէկ միլիոն ծախսուած է, ինչպէս զրուած է, այլ Վսեմ. Պօղոս փաշային ազգով մուկրած մէկ միլիոն ֆում. քի մէկ երրորդով միայն. իսկ մնացեալը՝ ի տուկոսն յատկացուած է ուսանողաց ուսումնառոյթին մեծութ. (bourse), կէսմ յգլխատոսի մասնագլխակամ վարժարանաց հետեւողաց և կէսմ Ներպիտի մէջ քարծր ուսումը ընդունողներու:

1. Բզմ. ի մէջ 1907 (սեպտ. հոկտ.) Հայ լրագիրներէն անճիշտ տեղեկութիւն մը մատնէ Ազգային կեանքը Լուսբերու հաւաքածոյին մէջ, զոր բարեկամ մը կ'աղղէ: